

Գ Յ Ո Ւ Տ Ի Ն Փ Ա Ռ Ք Ը

Մեսրոպ, հայ դարերուն դիմաց կեցող
 Դուն աղամանդյա ապառաժ,
 Դուն մանուկներու մերկ ուղեղեն
 Մինչև հանճարը ցուքեր ցանող,
 Գիտակցությանց անստգլուտ փարոս...
 Դուն, որուն կոփյուռը կռանին,
 Ժամերուն պես, րոպեին պես անդադար,
 Իմացական թանգարանին արձանները մեզ կը ձուլե...
 Դուն աննինջ հսկող, դուն տիտանյան Տեսանող,
 Դուն օրորոցեն մինչ գերեզման,
 Մեր մեն մի խոսքին, մեն մի շունչին,
 Գեղեցկաձան բացատրիչ...
 Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
 Դուն անբավ բավիղ տևողության,
 Դուն գոյացության արգավանդ հայր,
 Դուն լույսի անիվ, դուն հավատքի հրավեր,
 Դուն հայրենի-հողին վրա մորկին պես բարձրացող
 Անտաճ անհուն, անտաճ սրտի,
 Որուն մեն մի հաստատաբուն ծառերն հսկա,
 Մեկ-մեկ քնար, մեկ-մեկ փանդիռ են մեր շունչին...
 Մեկ-մեկ շեփոր մեր հագագին ռազմական,
 Մեկ-մեկ պատնեշ ճակատագիր պատուհասին...
 Դուն անվատնելի ցորյանի դաշտ, դուն ծրի՛ հաց,
 Դուն հունձք հարուստ, և դուն հնձան հրաշեկ,
 Դուն արբեցությանց և զինիի ավազան,
 Որուն մեջ ե՛ս ալ ոսկի սափորս եմ մխրճեր...
 Արևներու ծարավես խենթ...

Եվ այսօր, քու սրբութամբդ սնած՝
 Ես ապաժաման քնարահար,
 Եվ անվճար ու անարժան երախտագետ,
 Ես՝ քու ցեղիդ հոգիին հայելին թեզ կը բերեմ...
 Աչքերուս մեջ անոր աչքեն հուր առի...
 Ու իմ խոսքերս անոր սրտեն եմ քաղեր,
 Եվ ի՛նչ որ կարդաս ճակտիս վրան,
 Ինչ որ կարդաս ժպտիս մեջ,
 Անոր Հույսո՛վն եմ ես գրած...
 Եվ թույլ տուր այսօր, ո՛վ Մեսրոպ,
 Որ Հայոց հողեն մինչև աստղերը հասնող
 Զու ոսկե սանդուխեդ վե՛ր բարձրանամ,
 Եվ հաստատաքայլ, աստիճանե աստիճան
 Ու պսակե ի պսակ և լույսե ի լույս,
 Իբր վավակ մը մտածումիդ,
 Ես ի թե՛զ գամ, իմ այս երգս երգելու...